

ՁԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ համար	12
Տարեկան	6
Հեղատուայ	6
Արտատպանի համար	15
Տարեկան	8

Անկերիկայի համար	3
Տարեկան	1.50

Իրականացնող սոցիալական կոմիտեի համար 40 ս. իսկ վերջին կրկին համար 20 սակարկել է. կրկին անկերիկայի համար 20 0/0 զեղչ կրչից:

Վառձայի համար մեկ 10 սակարկել

ՇԱԺԱՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՐՈՒՆԻ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱՏ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դ. կիչ
Խմբագրութեան հաս-
ցիին

Редация на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտատպանի համար
մեկ
(20 ՍԻՆԹԻՄ)
Պոչկարիոյ համար
մեկ
(15 ՍԻՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չէն տրուի

ՇԱԺԱՆԻ ՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՄԿ ՎՃԱՐԻ

Յ Ա Ի Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Վառձայի գաղանակական ընկերները և «Շարժում» խմբագրութիւնը խորին ցաւ զգալով սիրելի ընկեր Յարութիւն Սիմոնեանի վաղաժամ ու անակնկալ մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ Սիւնիոսի և անգլիոսի վերջ տուաւ ծաղկափթիկով ու բարի ընկերով մը կեանքին, իրենց յարգալից ցաւակցութիւնը կը յայտնեն անոր վշտահար ծնողաց:

ՄԵՆՔ ԿԱՆՑՆԵՆՔ...

Սիրելի ընկեր Վ. Մ-ին

Մենք կ'անցնէինք խորիտ քայլով Հին, պատմական գիւղին մէջէն, Գիւղին մէջէն որ ատենով, Հայ քաղաք էր ազատ և շէն:

Բառասուն ֆէտայիներ էինք, Բառասունս ալ սպանազէն, Եւ մեր սրտեր կը սրտփէին, Այդ հողաշէն գիւղի տեսքէն:

Անցած էին քանի՞ դարեր, Ու հոյակապ քաղաքն որքան, Ընկճած, սրբած, պաշտպան էր, Բիրտ լուծին տակ ճոճորական:

Հայ գեղջուկը իր սարերու, Ձինը ողն ազատ ա'լ չէր շնչեր, Անհետ անցած էին գոթերու, Մեր փառքն, աւա՛ղ ալ չէր յիշեր:

Այս երկրին մէջ արիւն երբէք, Պայծառ լուսով չէր շողացեր, Մտուկ հայուն՝ յոյսը երբէք, Ձէնքի փայլով չէր երեւցեր:

Ու կ'անցնէինք խորիտ քայլով, Հին, պատմական գիւղին մէջէն, Գիւղին մէջէն որ ատենով, Հայ քաղաք էր ազատ և շէն:

Հին՝ աւերակ ծերեր դողողով, Կ'օրհնէին մեզ, կ'արտասուէին, Խոր, կուտակուած ցաւերն ամբողջ, Այդ ժամուն մէջ կը մոռնային:

Մայրերն իրենց պոփոկներու, Ձեռքէն բռնած և ժպտապին, Մեզ ցոյց տային՝ աղիքսարկու, Կը նայէին զէպի երկին:

Երիտասարդ ոգիւն, ուսած, Խոնարհ զլուինին կ'առնէին վեր, Ու սուրբ վրէժի բոցով վառուած՝ Կ'ուխտէին մեզ լինել ընկեր:

Հարսերն անդին լուռ և տխուր Իրբեւ ոգիք Հայաստանի, Ա'խ, ի՛նչ վիշտեր, ցաւեր անլուր, Կը պատմէին առանց խօսքի:

Իսկ աղջիկներն արև ու կեանք, Մեզէ խնդրող նայուածքներով, Դէպի կո'ւ, դէպի պարծա'նք, Կը մըլէին մեզ անվրդով:

Կը սրտփէին ամէն սրտեր, Ոգեւորուած, ուրախ էին, Լոկ մի քանի ցած հողիներ, Սարսափահար կը դողային:

Ու կ'անցնէինք խորիտ քայլով, Հին, պատմական գիւղին մէջէն, Գիւղին մէջէն որ ատենով, Հայ քաղաք էր ազատ և շէն:

5 Ապրիլ 1904 Ֆիլիպէ

ՈՎ Ա. ԵՒ Ի ԲՄԻՈՒՆԻՔ ՈՒՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԱՂՈՒՆՈՎ ԽՍՍԵՆՈՒ

Կրկնվում են հոսարակալուն կեանքի տգեղ երեւոյթները ու նրանց մէջ գեր կատարողները, պէտք է կրկնվեն և դրանց դէմ մաքառումները, որպէսզի տգեղ երեւոյթները ջնջվեն ու գերակատարները ոչ միայն չկարողանան տեղ բռնել կեանքի մէջ, այլև չէզոքանան:

ՅԵ թւականից սկսած ամէն հայ, որը հետեւում էր արտասահմանի խայտաբղէտ ուղղութեան մամուլին, անշուշտ յիշում է ուսակսիօնի շրջանի այն տխուր հերոսներին, որոնք միութիւն պահանջելով հանդերձ ամեն լուտանք թափում էին իրենց միացնելիք յեղափոխականների գլխին և զանազան անմիտ ծրագրներ առաջարկում... Ու այդ տխուր ասպետները ամեն լուտանք և ամեն յիմար պահանջ թափում էին հայ ժողովրդի անունով:

Դրանցից գլխաւորն էր հանպտօցեալ Չարքեանը, որը չափազանց վիրաւորված բոլոր կուսակցութիւնների կողմից իրեն եղած արհամարհանքից ու նըրանց շարքերում տեղ չը գտնելուց, մի կողմից հայոց յեղափոխական մամուլի «մուր» իր

օրգանների միջոցով միութիւն էր քարոզում, միտ կողմից փրփուրը բերանին ամէն լուտանք թափում միացվելիք յեղափոխականներին գլխին, յուսալով որ կամ կուսակցութիւնները իրենց վախնալով տեղ կտան իրենց մէջ, կամ թէ կը կարողանայ մի նոր հոսանք ստեղծել նոր յեղափոխական մարմին կազմակերպելու, որի ղեկավարը ինքը պէտք է հանդիսանար:

Սակայն խելճ Չարքեանը մեռաւ ոչ միայն իր իղձը փրումը, այլ թէ կեանքի մէջ և թէ մահուան ընկալներում լուրջովին լքվեց այն հայ ժողովրդից, որի անունով մաքառում էր հայ յեղափոխական կուսակցութիւնների հետ: Եւ շատ բնական էր, հայ ժողովուրդը այլևս փարախ չէր, նա իր յուսահատական վայրկեաններում իսկ՝ ըմբռնեց թէ Չարքեանները ժամանակի պահանջներին մարդիկը չեն և այլևս ժողովրդի հետ չեն կարող լինել:

Իայց Չարքեանը կարող էր այդ սխալը գործել, որովհետեւ նա մտաւոր կարողութիւնը չունէր նկատելու հայ ժողովրդի այն մըտաւոր ու բարոյական բարեփոխումը, որ տեղի էր ունեցել չընորհիւ մեր կեանքի պատմական ծանր պայմանների ու պահանջների:

Գրեթէ Չարքեանի հետ գուցե թացաբար գնացին և Չարքեան, Իսկէնտէր, Յակոբեան, Փորթուգալեան, Չերազ և դրանց մանրանկարները, նոյն ուղղութեամբ բայց տարբեր ձեւերով, կրկին միշտ խօսելով ժողովրդի անունից, միշտ միութիւն պահանջելով, միշտ միացվելիք յեղափոխականներին գատափետելով, առանց ըմբռնելու՝ թէ ժողովրդի մէջ արգէն կայ մի հասուն տարր, որ գիտէ ի՛նչ այն տարբեր, որոնք կեանքի մէջ ինքնաբերաբար չեն միանում, նըրանց ոչ զօրով և ոչ էլ արհեստական կերպով կարելի միացնել, ու բուն կամ արհեստական միութիւնը ոչ միայն ուժ չէ, այլ

ընդհակառակը եղած լաւ ուժերն էլ կը շլատէ:

Իայց իրականութիւնը դրանց էլ պատճեց. հայ ժողովուրդը, որի անունից խօսում էին այդ ինքնակոչ փաստաբանները, նըրանց ոչ միայն լքեց, այլև մոռացութեան տուեց, գոնէ քաղաքական տեսակէտով: Այո, ժողովուրդները անողորք են դէպի նըրանց, որոնք կամ առանց ըմբռնելու ժողովրդային կեանքի իրական պահանջները, կամ կեղծելով ժողովրդական շահերի պաշտպանի վերարկուն են ուղում հագնել...

Այսօր նոյն շաւղով է ընթանում Պ. Խուչպուլեանը. մի մարդ, որը միշտ միութեան միջնորդ հանդիսանալով յեղափոխական մարմինների մէջ, միութեան կարծես բուն է եղել, որովհետեւ իր ստեղծած միութիւններին հետեւել են աւելի բուռն անջատումներ. ինչպէս, օրինակի համար, ՅԻ Դաշնակցութեան և Հնչակեանութեան միութիւնը, և 902 հին և նոր Հնչակեանների միութիւնը... Դժբախտ միջնորդ հայկական միութեան, որի միութեան հիմնական ընդունալութիւններին այլևս հաւատացող չկայ ոչ մի կուսակցութեան մէջ:

Այո, Խուչպուլեանը նոյն շաւղով է ընթանում, ինչ որ իր նսխակարապետները. և մենք գուշակում ենք որ սա էլ նոյն վիճակին պիտի ենթարկվի հէնց ժողովրդի կողմից, որի անունով այն էլ յեղափոխական ձոյլ մարմինների հանդէպ, չը գիտեմ ինչ դրական փաստերի վրա հիմնված, պահանջներ է դնում:

Մեծ է Խուչպուլեանի ոգեւորութիւնը իր նոր սկսած գործի մէջ. և նա որոտում է, ու՛մ առաջ... գրեթէ հետեւեալը. — ժողովուրդը յաղթանակով պէտք է կոխտէ ամեն խոչնդոտ և կատարէ սղգի բաղձանքը՝ Միութիւնը մէրվանախի հերոսն է միտքս գալիս այս որոտումների առջեւ...

Այդ անտեղի որոտումները թղթի վրա գրած միջոցին խուչպուլեան մոռանում է որ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ Անգրանիկներին, Սերբերին, Բաբելէն-Սիւնիներին, Վազգէններին, Պետոներին, Սասունցիներին և սրանց՝ երկրում, հարկերու հետևողներին թեև ու թիկունք հանգիստացող այդ յեղափոխական մարմինը՝ արդէն գրականագէտ ներկայացնում է հայ ազգի քէն, որի առջև խուչպուլեանները ծպտուն հանելու բարոյական իրաւունքը չունին:

Նպատակը մէկ է, գոչում է միութեան և ջլատման այդ պատմական ակտը միջնորդը. դա ի՞նչ հակասութիւն է, ի՞նչ է նշանակում. որ կարելի է երկրի մէջ միանալ և երկրից դուրս ոչ գործը ամեն տեղ մէկ է:

Այո, ըստ երևոյթի նպատակը մէկ է. բայց մեզ համար ոչ որովհետև Դաշնակցականներու միաց վելիք մարդկանց մենք յեղափոխականներ չենք ընդունում, և մեր համոզումով նրանք չունին մեր նպատակը: Այո, երկրում կարելի է միանալ, որովհետև այնտեղ գտնվող յեղափոխականը իրապէս յեղափոխական է, իսկ արտասահմանում վխտացող և մեզ հետ միանալ ձգտող յեղափոխականներին շատերը

կամ ընկերացաններ են և կամ շարլատաններ: Կարծեմ այս տարբերութիւնը բժշկանքի է խուչպուլեանի նուրբ ուղեղին և բարի սրտին...

Վերջին խօսքը խուչպուլեանը իր վերջին յօդած յուսահատական ճիշդի մէջ իր օյինպագութիւններին չը հաւատացողներին շահագրգռած է հաշակում միութեան շիրականաւոր մէջ: Մինչ էլ կարող ենք ասել որ ինքը ամենաշահագրգռված է ոչ իրականաւարիք միութեան հարց ստեղծել ձգտելու, որովհետև ոչ մի կուսակցութեան մէջ տեղ չունի, ... բայց մեծ ցանկութիւն հայ կեանքի մէջ գեր կատարելու և հին շնչակեանքից վրէժ լուծելու համար, իրեն արդարացի թէ անարգարացի արտաքուսմը մաքրագործելու համար...

Կրկնում ենք, զուր են այդ ճիշդերը Դաշնակցութիւնը շատ մեծ խոչնդոտներ կոխել անցել է և կանցնի նոյնպէս այն շնչին խոչնդոտներից, որոնց ստեղծել են ձգտում զանազան խուչպուլեաններ: Կարելի է թէ գայ ժամանակ որ Դաշնակցութիւնը միանայ ընդ որ իրապէս հայ յեղափոխական տարրերի հետ. և երանի թէ շուտ գայ այդ ժամանակը. բայց նա կը միանայ իր ուղած ձեւով և ոչ թէ խուչպուլեանների պահանջով ու ծրագրով:

Կարծեմ հասկանալի է: ՎԱՐԴՈ

ՈՒՒ ՏՈՒՔ ԴՈՒՄԻՆ

— Այն, ճիշտ ասենք է. մերիններն ալ բան մը ընէին հի/ա...

Աս և սատր պէս բազմաքններ էր որ կը լսուէր ժողովրդական խաւերէն. երբ ամբաստան առաջ յեղափոխական պայթիւնը տեղի կուներսար Մակեդոնիոյ մէջ:

— Այն, բան մը ընէին...

Արդարեւ ժողովուրդին սա տրամագրութիւնը միութեան էր կերպով մը. երբ հակադիմադրական ակտը հասանքի մը շատ ակտը անցեալը ձգած էինք ետեւեւս. ստեղծուած հնչակեան լարախաղացներէն. Կոտորելի, Վարդեցի, Բալառայ ամբողջ բուն մը ընէր կանկալէր ու կանկալէ այսօր յեղափոխական կաշմակերպութեան — ԴՈՒՄԻՆ ԴՈՒՄԻՆ:

Ձգենք ժողովուրդին քիչ թէ շատ զգացումի, դատողութեան տէր մասը, եղած են նոյնիսկ մոլեռանդ կուսակցականներ այդ բազմաքն յայտնող, իրենց դործն է որ վայրկեան մը փնտաւել խորհած են, երբ անոր վրայ անգրագարծած են պահ մը. Գործը կը փնտաւել գործող կաշմակերպութեան — Դաշնակցութեան — մէջ, գործը կանկալուել անկէ: Ասի յուսադրիչ է և պատուաբեր Դաշնակցութեան համար:

Բայց սա պատկերին մէկ կողմն է. Չոր բազմաքնները չեն որ սակայն կրնան սկսուած գործը առաջ առնել, զուր չեն, բազմաքնն հետ պէտք է — պարտականութեան գրտակցութիւն, զոհողութիւն...

Աս ատ է որ կը պակսի ո՛չ թէ կուսին դաշար քանուող հայ հայդու-

կին, ո՛չ թէ տասնպանքի աշխարհին մէջ ցաւերով տապալուող հայ գեղընկին քով — այլ, մեր, ազաւ երկրի մէջ ապրողներու, ազաւաբեան հասարկ զինացողներու խոյ:

Թուրքը չի բաղձար միայն որ հայ կեանքը չի նեղէ, ան կաննէ եւ թաղանք և կիջնցնէ զուրիսուս, ան իր դերին մէջ է. կը գործէ, արիւնք կը վազցնէ, կը նեղէ ու կը տանջէ:

Բայց քանի՞ են անանկներուն թիւը մեր մէջ, որ սա արիւնք կարծեւ միջոցներուն վրայ մտածեն և օգնելու աշխատին: Բան մը ընելու սպասանքը անգրագարծած են օր մը օրանց իրենք իրենց վրայ, թէ՛ իրենք նայ պէտք է բան մը ընեն — Օ՛րհնէն:

— Այն, մերիններն ալ բան մը ընէին...

Աս բազմաքնն սա արտասայտութեան հետ կը յիշատակուի նախ հիացումը՝ դէպի Մակեդոնական պայթիւնը, զկար Մակեդոնացի յեղափոխականը:

— Աս քը չի կայ — կը լսուէր ակէ անկէ — խօսք չի կայ — մարդիկը չը նորքով աւելն — քաղցիւն, ընելն եւ քը ասանկ պէտք է ընել:

Աս ատ ալ նորէն բազմաքնող, հիացողի դերին մէջն էինք, ո՛չ թէ գործնական հայեացքով նայողի, քննողի, դատողի:

Մեր ժողովուրդին հիացումը սա արտասայտութիւնը սակայն, անգրագաւելի կերպով գնահատելի էր ան քանի՞ մը զգլզգլներու դատողութեան, որոնք հպուր կրնային անհալէպտի զգալը բերանին տանել և կեր էին — տակաւին տարիներ առաջ, երբ Մակեդոնական յեղափոխութիւնը իր խանձարուրդին մէջն էր, երբ դեռ նոր էր սկսած ան դասա-

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿՈՒ ՀՐՈՍԱՐԱԿՈՒՄԷՆ ԱՌԱՋ

(Շար. Ասխորդ Բիւիկ)

Դաստիարակութեան հարցը անոնց մէջ է, որոնք Արծրունի ամենէն աւելի կարեւորութիւն ընծայած է: Ինք գրական կրթութեան մարդն ըլլալով կը պահանջէր որ մեր ազգային կրթութեանը բացարձակագէտ հիմնուի գիտական ու դրական սկզբունքներու վրայ: Այժմունքն իրաւունք ունէր սա պահանջը դիմելու, որովհետեւ մեր անկերպարան վարժարանները դեռ չէին թօթափեր հին սքոլաստիկ դաստիարակութեան անձեթեթ գրութիւնը: Ընդհանուր առմամբ, ան կը պահանջէր որ արուած դաստիարակութիւնը անհատը ընդհանուր զարգացման հասցնէ, անոր մէջ բնական ընդունակութիւնները զորացնէ, ինքնանաւաչութեան սերմը ցանէ անոր հողոյն մէջ: Այս սեռակ դաստիարակութիւնը կը կոչէր բարոյականացնող դաստիարակութիւն: Բարոյական բառը մեր մէջ շատ տարօրինակ կերպով հասկցուած է. ամէն ինչ որ մեր հնամուտ սովորութեանց կամ մեր նախապաշարութեան հակասակ են, անբարոյական կը համարենք: Քիչ շատ ազատական ձգտումներ ունեցող երիտասարդ մը իսկոյն անբարոյական կը հռչակուէր մեր մէջ: Այս ըմբռնմամբ, մեր հին սերունդը կը կարծէր թէ բարոյական — խրատական Ռեդիկալիւնով, կրօնական ընթերցանութեամբ մարդը բարոյական դաստիարակութեան կը հասնի: Ասիկա

յայտնապէս հին սքոլաստիկ դրուութիւնն է. որ անհատին մէջ կը ստանան ան ազատ զարգացումը. ինքնանաւաչութիւնը, ձեռնբեկցութիւնը:

Ասոր փոխարէն Արծրունի կը պահանջէր ազատ դաստիարակութիւն: Ընդգծելով պէտք է իրենք վճռեն իրենց զաւակին ապագան, այլ տղան ինք իր բնական հակումներուն հետեւելով իր ապագան վճռէ:

Արդիկ հաւատար ընդունակութիւններով չեն ծնուում, կը գրէր 1867ին Մեղուքի մէջ: Իր երեխայ մը անարկային ընդունակութիւն է ցոյց տայի, միւսը որիչին: Աս թէ չէք իմանում ինչ բանին ընդունակ է երեխան, նորա ինքը չսպաննելու համար, սուէք նրան այնպիսի դաստիարակութիւն, որ նա փոքր թէ շատ ամէն անարկայնոր վրայ տեղեկութիւն ունենայ եւ կարողանայ հասկնալու թէ ինք ինչ բանի ընդունակ է: Այն ժամանակ, նա մեծնալով կզգայ իր ընդունակութիւնները, կընտրէ իր առարկան եւ կը պարապէ նրանով:

Այդ պատճառով կարելի է ասել թէ մարդիկ սպանում են իւրեանց երեխաների միտքը, երբ դեռ փոքր հասակից ստիպում են նրանց այս կամ այն բանով պարապել, առանց ուղիղ դարձնելու նրանց ընդունակութիւններին. մէկին ստիպում են զինուորական լինել, միւսին վաճառական:

Այս ուղղութեան հետեւանքը շատ աղտոտելի եղած է. մեր տղաքը ստիպուելով իրենց ձեռնբեկ սահմանած անարկայնով զբաղելու, վերջ ի վերջոյ կը կորսնցնեն ինքզինքին վրայ

ունեցած հաւատքը, եւ ինքզինքը անընդունակ բնաւորութիւն կարծելով՝ աշխարհի վրայ անկողք ու անպիտ արարած մը կը սկսի նկատել իր անձը եւ անձնատուր կը լլայ ցոփուածան ու անբարոյականութեան:

Իսկ զարգացած ինչքը միշտ անբարոյականութեան թշուառ է: Չարագացած ընելով Արծրունի չի հասկնար համայնարան տեսած տիպիստարարայածները, որոնք իր անձին շահէն զուրս Եւ հասարակական հասկացողութեան ինչն են, որոնք չեն անցած իրենց ընտանիքին թիւր ու ցուրտ մտքերը, բարքերու կոպտութիւնն ու մանկութեան իրենց մէջ արմատացած նախաարտասովորութիւնը: Չարագացած մարդ ըլլալու համար չի բաւեր լոկ սովոր, այլ պէտք է մտնայ:

Այս ձգտումներով զեկաւարուող Արծրունի կը պահանջէ որ վարժարաններին հետապնեն վերացական ու սքոլաստիկ ուսումները եւ անոնց տեղ գան բնական գիտութիւնները, Բնական գիտութիւնները հիւսուած զընդունակութեան և վարժարկութեան վրայ՝ մանուկին մէջ պիտի զարթեցնեն անձնական հետազոտութեան եւ ձեռնբեկցութեան ոգին, զայն պիտի վարժեցնեն իր շուրջ տեսնելու, քննելու, պրպտելու և անձնական փորձերով երեւոյթները լուսաբանելու: Այն ատեն է որ, նոր սերունդը դասուան պահանջած սերունդը պիտի ունենանք, որ համարձակօրէն կրնայ իր գոյութեան իրաւունքը պայտապանել:

Ընդհանուր դաստիարակութեան անցնելով հայ կնոջ դաստիարակու-

թեան հարցին, Արծրունի նախ անոր մտաբար կը քննադատէ հայ կնոջ վիճակը ընտանիքին ու հասարակութեան մէջ:

Երբ մարդ զիտէ, հայ ընտանիքը, իսկոյն դարուոր բանակալութեան եւ խոր անսքողութեան անողորմ փրպակտութիւնը պիտի նշմարէ նոյն Ամէն: Իրաւունք, ամէն տանձնաւոր նորում բացարձակագէտ այդ մարդուն վերաբանուած է, ու կիւնը հրնադոյն զարհուր իրաւագործ ըստուկը կը մնայ, չունենալով ոչ մի ձայն, ոչ մի կարեւորութիւն, ճիշդ սեփականութեան մը անանական գերին մէջ պարփակուած, կնոջ իրաւագործութեան այս բովանդակ անոնի հետեւանքներ ունեցած է. ան եղած է պատճառ որ հայութեան ծոցին մէջ կազմուին երկու որդայէն անշատ ու աններգաշնալ սեռեր, մին միւսը ծխողը, թուլցողը, չէք քացնող եւ հետեւաբար, ընդհանուր ազգութիւնն ալ մեռելութեան դատապարտող Այր մարդը ամէն իրատեքներով օժտուած կրնայ ընտանիքէն հեռանալ, կրթութիւնը քաղաքակրթ տարրերու շիմումը եւ ազատութեան գործադրել իր ստացած դաստիարակութեան արդիւնքները, կիւնը, ընդհակառակը, ընտանիքին անբաժնօրէն կապուած է, հետանալ անկարելի է. ուստի դատապարտուած է անզարմանելի սգիտութեան: Արդ՝ ինչպէ՞ս բարեկարգ ու լուսամիտ ընտանիքի յուսալ հոն՝ ուր ընտանիքին ամենէն կարեւոր տարրը — կիւնը — անխնամ ու սգէն թողուած է, ու կիւնը համահաւասար կրթութիւնն իրաւունքներ չունելու ինչպէս այրը:

նել հայ յեղափոխութենէն — երբ է-
ին կրնամ իբր օրինակ ցոյց տալու ան
մեզի և շան քարոզներ կարգալու այն
անձնութեանը որ լսուին, որոնք
կեանքերն զբաժնէին գործին մէջ և
կեանքի փորձառութիւնը ունէին:

Երեկուսի խանձարուրի մասնակի
չուտ մեծացաւ զարգացաւ ու պոսի-
կաց ժողովրդական գրա թափով մը
մեր և քաղաքակիրթ աշխարհի հիւ-
ցունն ու ուշադրութիւնը գրաւելով:
Եւ ասի ո՛ր թէ գրա պէտք է ըլլայ
հայ յեղափոխականին, այլ հայ ժո-
ղովրդին, անգրագասնալու համար
ան իր վիճակին և պարտականու-
թեան ծանրութեան վրայ:

Հիացող և բաղձացող հայը, ան-
գամ մը իր աչքին առջև պարզեց,
բարձրագոյն զրան մեզ և Մակե-
դոնացիները իրարու հետ, Նկատի
առաւ մեզ և անոնք չըջապատող պայ-
մանները, և յետոյ երեւակայեց հայ
և Մակեդոնական յեղափոխութեան
պահանջներու տարբերութիւնը:

Օրինակներ գնենք մէջ տեղ. անա՛
անոնցմէ մէկ-երկու հատ —

Մակեդոնիոյ մէջ կուռող յեղափո-
խականը իրիկուրը Պուլխարիոյ ազատ
հողին վրայ է, ստուռն արդէն կը ու-
ռի վրայ է, յողմած կամ վրան-
գուելու վայրի տանին նորէն գալու
հոնգընու պայմանով: Պուլխար սահ-
մանապահը աչք կը գոցէ, թուրքին
քէօր կողմին կը հանդիպի:

Ինչնք ասոր դէմ հայ յեղափոխա-
կանին վիճակը: — Ան ո՛ր միայն շա-
քաթներով ճամբայ պիտի կտրէ, այլ
անոր անցնելիք տեղերը, գրտն թէ
ներսէն թշնամիներով չըջապատուած
է, անցըր անկարելի ընելով: Եւ աս
պայմաններուն մէջ է որ ան իրեն
ճամբայ պիտի գտնէ:

Պուլխար կամ Մակեդոնացի սպան,
զինուորը, որը որ կու գէք, ազատ հո-
ղին վրայ, զինուորական բանակին
մէջ կը մարզուի, կը կրթուի և օրին
մէկն ալ կը ձգէ զգետը. կառնէ կը
քալէ Մակեդոնիա, թերեւս հրացանն
վր անպաւ աննելով:

Հայ հայրուկը աս մարդանքն ալ
կը կատարէ գաղտնի, չըջապատուած
վրանգներով:

Մակեդոնացի յեղափոխականը ե-
թէ մէկ փամփուշար 40 սանթիմով
տեղ հասցնէ, զինքն ալ ձրի ըլլալու
պայմանով... Հայ յեղափոխականը
անոր տասը անգամը պէտք է ծախսէ:

Մակեդոնական յեղափոխական գոր-
ծին մէջ տեղ ունի ազատ Պուլխարիոյ
մէջ հանգանակուած գրամները, ո-
րուն մէջ խառնուած է ինչպէս պուլ-
խարին, այնպէս ալ հէլլային, յոյնին
և եթէ կու գէք հայուն դրամը, չի
հայտնելով աւելի մեծ գումարները
ինչպէս է Միս-Ստոնական տղարները
եւ այլն:

Մինչդեռ հայ յեղափոխութիւնը
կտպուէ հայ ժողովուրդէն արտա-
սահմանի հայէն՝ որ դեռ շատ խիտ
չառ ժլատ է, հայ հարուստէն՝ որ
դեռ կատարեալ ապարած է, եւ այս
նիհար միջոցներէն է որ Հնչակեան
խաչազոյնները հրապարակու կը գող-
նան իրենց ազատ գոյութիւնը քաշ-
կուտելու համար ի միաս յեղափոխու-
թեան և ի նախատինք հայ տառա-
պանքին:

Եւ դեռ ո՛րը գնենք Մակեդոնիոյ
կանալը կիցող իր եղբայրը, ազատ
Պուլխարիան, որ նեղ առնի պաշտ-
պանի գերի է որ կառնէ իր վրայ,
քաջալերելով ան իր մղձաղ կուրն մէջ,
կուրի վայրը գտնուող զինուորին մէջ
աղ մտածուած ինչ ոգի, ինչ ուժեր

չի արթնցնէր:

Այսքանն ալ կը բաւէ, եթէ լրջ-
րէն անդրադառնալ գիտնանք իրա-
կանութեան վրայ և ըմբոնել ուզենք
թէ ինչ մեծ ճիգերու, պարտակա-
նութեան ինչ ծանր բեռի մը տակ
պէտք է գգանք ինքզինքնին:

Ճանչնա՛նք պարտականութիւննիս,
եթէ կը սիրենք հայրենիքը, ուժ տանք
գործին, զենք տանք հայրենիքի՝ երե
կուզենք ազատութիւնը:

Եւ այն ատեն փոխանակ բաղձա-
ցողը պահանջող կրնանք ըլլալ և ի-
բաւուր կուրենանք ճակատաբաց
ըսելու:

— Հիմա՛ իրաւունք ունինք բան
մը սպասելու...

Սեր ներկայ անտարբեր — ակնկա-
լողի դիրքին մէջ կուռող հայրուկին,
յեղափոխականին կ՛ու խօսքերը ու-
նինք նետուած մեր երեսին, մէլմէկ
կարմրցնող ապտակներ:

— Ինչ կուտաք որ ինչ կը պահան-
ջէք, անսիրտներ, Հայրենիքի ապե-
րախա զաւակներ...

Ֆիլիպէ

Ժիրայր

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՍԻՕՆԻՍՏԵՐՈՒ
ՊԱՏԻՄ. ԺՈՂՈՎԸ ՖԻԼԻՊԷՆԻ ՄԵՋ

Կարժէ որ քանի մը տողով յի-
շենք քնարժու մի մէջ Սիօնիստ-
ներու ժողովը, տառապող և ա-
զատութեան ձգտող ազգի մը նա-
խաքայլերուն իրբեւ արձագանք,
որքան որ ալ ատ քայլերը ըլլան
թող և զուտ տեսական:

Չատկուան օրերուն քաղաքիս

«Ինչո՞ւ հայ կանայք, կը գոչէ Արծ
րունի, նոյն «Մեղու» մէջ, կար-
ծում են թէ ձեզ հարկաւոր չէ կրթու-
թիւնը. կարծում են թէ գեղեցիկու-
թիւնը և փողը ազգիս ամենամեծ
արժանաւորութիւններն են, եւ այս
արժանաւորութիւններն ալ ինչու՞
աղջիկը կարող է մարդու գնալ: Չեն
մտածուած որ, մայր գտնուելով նա չէ
կարող օրինուոր գաստիարակութիւն
տալ իր որդիներանցոյ:

Թեոյ, ամբողջ հայ իգական սե-
ռը երկու դասի բաժնելով, Արծրունի
մեզ կը պատկերացնէ անոնց իրաւ-
քանչիւրը գտաւ-գտաւ, Ահա հարուստ
ընտանիքի աղջիկը, թիկնու կրթու-
թիւն առած է, գիտէ քանի մը օտար
լեզուներ թոթովել, զորս գործածե-
լու ասիկ չունի: Կամուսնանայ ա-
ռանց անտիքը ճանչնալու, եւ ինչ-
պէս ճանչնայ, քանի որ ազգէ է:
Պատկուելն սչ առաջ, ոչ վերջը գար-
զանալու մասին երբէք չի խորհիր:
Իր մտածման բոլոր հոգն է քառոյս-
կան ըլլալ, այսինքն մտնել, կեղծ-
խաղտ, վախկտ ու կոշտ, որպէսզի
իր սէրն ու կուսութիւնը տայ գէմ,
կողմ ամենէն անբարոյական մար-
դուն, զոր, սակայն, ծնողքը իրեն
համար վճռած են:

Իսկ պղծատ աղջիկը ստիպուած է
իր օրպայտիկը ճարելու աշխատ'լ,
չուրի կրթութիւն, որ գիւրբաղէ իր
վաստակը, ինչ կընէ, մարդ կը փնտ-
ռէ հետը բաւանանալու համար, որ-
պէսզի անօթի չի մնայ, առանց գը-
տած մարդուն անցնելով կամ ներկա-
յովը հետաքրքրուելու: Ասկէ յետոյ
կուրայ աննելիք աշխատ ընտանիք մը
որ ինչամի է ամէն լոյսի, ամէն յա-

ոսով իմութեան, որ ջերմօրէն պլլը-
ւած է ամենէն լըրճուկ ու ամենէն
մեղմական կեանքին:

Այս էր, ու դեռ հիմայ այս է
մեր ըմբռնուածը իրական սեռի մա-
սին: Տեսնենք թէ ինչ էր ընտանի-
քէն դուրս անոր առած կրթութիւնը:
Սմէն ընտանիք պարտք կը համա-
րէր իր աղջկան սորվեցնել ֆրանսե-
րէն գաշնակ, արդու զարդի վերա-
բերեալ տեղեկութիւններ, սար և
մանուսնող մունջ բռնել, ասոր վը-
րոյ աւելցոր կարգ մը կցկտուր,
անկապ ճանօթութիւններ քերակա-
նութեան, աշխարհագրութեան,
պատմութեան, եւ կուրենաս դա-
տարկ, անգնդային, խառնիճադանճ
քառք: որ մեր աղջիկներուն գանկը
կը գրաւէ: Ուղիղը ճնշուած, ճըզ-
մուած է ու միայն մէկ պահանջ ունի,
հաճոյ երեւել ար մարդոց, սիրտը
չգգար գրեթէ, կամ կըզգայ միայն
ինչ որ կոյր, կենդանական կիրք է:
Պատճառը, որովհետեւ հայ աղջիկը
զարգացում չունի, չի մտաւոր, գրա-
կան կրթութիւն չէ առած: Անոր ա-
մօթ սեպած են մարդակազմութիւն
կամ բնախօսութիւն գաս տալ, ինչ-
աղջկան մարդկային մարմնին կազ-
մուտքի մասին խօսիլ, միթէ ան-
բարոյականութիւն չէ՞ ատիկա: Այս-
պէս կը տրամաբանէին միակողմանի
նախապաշարեալ դատողութեան անը
մարդիկը:

Բայց այս ուղղութիւնը սխալ է,
մարդը բնականէ օժտուած է կարգ
մը յատկութիւններով, որպէսզի քն-
նէ իր շուրջը գոյութիւն ունեցող
տարբեր, հասկնայ անոնց էութիւնը
և կարելի եղած օգուտը քաղէ, որ

Լիքսէնպուրկ թատրոնին մէջ
գումարուեցաւ ժողովը:

Մուտքը ազատ ըլլալուն՝ ամէն
հրէայ համակիր — հարուստներ
չի հասկնաք — կը փութար ներ-
կայ ըլլալ հոն բաւական հոծ
բաղձութիւն մը գոյացնելով:

Ժողովները տեղի ունեցան
Պուլխարէն լեզուով:

Պուլխարիոյ ամբողջ պատգա-
մաւորներուն թիւն էր գրեթէ
60-65, որոնցմէ հազիւ 4-5 հոգի
բացակայ էին:

Ժողովին սպաւորութիւնը բա-
ւական լաւ էր:

Հետաքրքիր էր տեսնել հոն,
չիտակը, աս երիտասարդ դէմ-
քերուն մէջ հին սերունդէն ալ
ներկայացուցիչ մը, որ իր խա-
խամական մօրուքովը բազմած էր
իր պատգամաւորի աթոռին վրայ
և երբ հին մարդոց տղիտութեան
մասին ակնարկութիւն մը կը ըլլար,
մօրուքը կը ըողոքէր:

Կազմակերպական սովորական
հարցերէն զատ, գլխաւոր խնդիրն
էր Օկանտա գաղթել չի գաղթե-
լու խնդիրը, որը Պագելի գօնկ-
րէն ընդունուեր է, ինչպէս
կերեւար:

Պատգամաւորներուն մէջ խօսե-
լու կարողները — Սիօնի թէ Օ-
կանտայի կուսակից — երկարօրէն
պարզեցին իրենց հայեցակէտ-
ները և պաշտպանեցին իրենց
համոզումը:

քան մարդ լաւ ճանչնայ բնութիւնը
և ինքզինքը, այնքան աւելի շատ
օգուտ կը քաղէ անոնցմէ, իրերու
ճանաչողութիւնը մարդը զէպի լաւը,
զէպի կատարեալը կը մղէ, իսկ կոյր
ու տղետ մնալը, մարդը կը տանի
զէպի վատը, զէպի անբարոյականու-
թիւնը: Երկուքն ո՛րը աւելի լաւ է:
Պէտք է այս դրութեան վերջ մը
տալ, բայց ինչպէ՞ս ընել:

Փոխանակ աղջկան գլուխը մի-
մար ու անօգուտ առարկաներով լեց-
նելու, զայն ճանօթացնենք գրա-
կան գիտութեանց հետ, ասի՞ չի սե-
պիք ճանչցնելը մարդուն մարմնին
ու կեանքը: Պէտք չիկայ անասել
ներով աղջիկներու միտքը սար-
ափեց
նել, այլ ընդհակառակը պէտք է չա-
նալ որ, անոր մտքին մէջ աշխարհի
մասին պարզ ու բնական հայեաք-
ներ կազմութիւն Մէկ խօսքով շտպան-
ները անոնց մէջ հոգին ու մարմինը
աւրակուն գաստիարակութեամբ, այլ
նախապաշարուելիք մէկզի գնելով
մտեցնենք զայն այս մարդոց ընկե-
րութեան, որուն զարգացումը իգա-
կան սեռին համար կրնայ խթան մը
ըլլալ և անոր ուղղութիւն, նոր
կեանք կրնայ ծնիլ:

Ասիկա կը պահանջէր Արծրունի
կանանց մասին. բայց միթէ հայ ըն-
տանիքը այն աստիճան զարգացած
էր որ կարողանար ըմբռնել Արծրու-
նի պահանջին օրինաւորութիւնը:
Դժբաղդաբար ոչ, բռնակալ հայ ըն-
տանիքը չէր կրնար հանդուրժել ա-
նոր ու թող աւար որ իր աղջիկը երի-
տասարդներու հետ յարաբերութեան
մասնակցի երես ելլէ. հայրը անսահ-
ման հրամայող է իր ընտանիքին մէջ,

անսահման բռնապետ. իր կրնն ու
որդիները պէտք է անպայման զինքը
մտիկ ընեն, առանց ընդդիմաբաւե-
լու: Ասկէ յետոյ եկած է հայերու
իշխանաւոր ու կամակոր բնութիւնը,
որուն վրայ աւելնալով մտքի անան-
կութիւնը, յետոյ բերաւ հասարա-
կական կեանքի փճացում. մեր հա-
սարակական գործերը, թէեւ շատ
հեշտին ու պարզ, միշտ անշաղկու-
թեան կը մատուցին հայուն իշխանա-
սիրութեան և կամակորութեան պատ-
ճառու միայն:

Կինը սակայն, ազնիւ, զարգա-
ցած կինը պիտի կրնայ բարձրացնել
մեր ընտանիքի այս անկեալ բարո-
յականը: Ան է որ կրնայ անհատը
կրթել իր խանձարուրէն, եթէ ինք
պատրաստուած է իր կոյրութիւն, տն
է որ կրնայ հասարակութեան օգուտա-
կար անդամներ պատրաստել, եւ երբ
հայ կինը իր կոչման յարձրութեան
վրայ կանգնի, կրնայ իր բարոյա-
կան աղղեցութեան տակ աւելի նոյն
իսկ զինքը չըջապատող հասարակու-
թիւնը: Ահա թէ որքան բարձր է
կանացի գերը մարդկային հասարա-
կութեան մէջ:

Բայց մինչեւ այսօր քանի՞ հայ կին
ըմբռնած է իր կոչման այս բարձրու-
թիւնը և քանի՞ կին կը ձգտի ա-
նոր հասնիլ: Պատասխանը գուցէ յու-
սահետական պիտի ըլլայ:

(Շարունակելի)

Օկանդան պաշտպանողները աւելի գրական կողմէ կը մտածէին գործին, իսկ Սիօնիստները հայրենասիրական էին:

Երբ դեռ մէջտեղը արևուն խնդիր չի կայ, շատ գիւրդին կառնէր կը ծախուէր ամէն բան:

Երկար ճառերէ ետք մեքսիկացաւ Օկանտա գաղթելու հարցը ձայներու մեծամասնութեամբ: 15-20 պատգամաւորներ ալ խրդ-ճերներն հանգարտ պահելու համար գաղափարնուն վազ անցան և ձայն չի տուին:

Քանի որ գաւառնանքի կամ բռնաբար որ համոզումի աս տարբերութիւնը առաջ եկաւ Սիօնիստներու մէջ, հաւանականութեամբ կամ կանուխ երկուքի բաժնուին:

Թղթակից

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Հասան քէօյ Պ. Ռ. Մեծիկ — Զեր զրկած դրամները ընդունեցինք. նախորդ անգամի զրկածն մեր բաժնեգիրի հաշիւն ընդունած ենք: պարտք չունիք: Զեր նուէրն ալ 4 լէվ Սասնոյ քաղերուն, յանձնեցինք ուր որ անկէ լաւ ասցէ մը տուէք գիրքը զրկելու համար:

ՌՈՒՍ ՄՍՄՈՒԼԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻՋՈՑԻՆ

Ռուսական ձախորդութիւնները Մայրագոյն Արեւելքի ներկայ պատերազմի մէջ առիթ են տուել քննադատել ռուսական սխալ թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութիւնը «նոստրոս վրէժիա» և «կրթութեան» կոչված կառավարական և զէպի օտար տարբեր միջտ ատելութեամբ վերաբերվող թերթերը խիստ քննադատական յօդուածներ են գրում բացատրելով որ Ռուսները կուլտուրան տարածումին միայն սրով և կրակով, ռուս կառավարութիւնը, անհամբերատար է գէպի իր հըպատակ ցեղերի դաւանանքները և այդպիսով փոխանակ համակրանք գրաւելու օտարութեանէ արժանանում:

Արդեօք իրապէս Ռուսական յետադէմ մամուլի ներկայացուցիչները զգում են իրենց պետութեան սխալները և դատապարտում, թէ պատերազմական ձախորդ պայմաններից ճնշված ուզում են շոյել, փայլախել ռուսական լծի տակ տառապող ժողովրդներին, ներքին դժգոհութիւնները այսպիսի փոթորկալի ժամանակում մեղմացնելու նպատակով:

Չափազանց սուր կերպով ծաղրում է ռուս դիւանագիտութիւնը և կառավարութեան ղեկներալ Դըրօզովիտով: Թերթերը անցեալ օրեր գրեցին որ նա մի տեղ ասել է—Ռուսիա միջտ անյաղողութեան

պէտք է մատնվի, որովհետեւ վեց նապաստակի ետեւից միանգամից է ընկնում. իսկ մի ուրիշ անկայտարարել է «ձաբոնացիք մեզ ձեռնում են իրանց պատերազմական նաւերով, իսկ մենք նրանց մեր աղօթքներով»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկար և Օերպ կառավարութեանց միջեւ բուսային և հեռագրային գաղտնիկութիւն կնքուեց է. բայց սրում միազին մարքաներով և հեռագրի խօսքի միատեսակ սինով պիտի կատարուին հարգողակցութիւնները:

— Յիւրիպէի մէջ պուլկարական բժիշկներու համաժողով մը պիտի տեղի ունենայ, որուն նիստերը ամսոյս 23.28 պիտի տեսնեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլէն Ապրիլ 7ին կը հեռագրեն Մակեդոնիոյ երեք վիլաէթներուն և Ատրիանապոլսի նահանգին մէջ 1500 հոգիի չափ պուլկարներ ներման արժանացած են: Ազատ արձակումը իսկոյն տեղի պիտի ունենայ, որովհետեւ պահանջուած երաշխաւորութիւնը, ազատողները իրենց տեղերը վերադառնալէն վերջը պիտի տան, Հոգեւորականներու համար պիտի երաշխաւորեն առաջնորդները: Էտիրէի նահանգին մէջ 40 հոգի ներման չը պիտի ենթարկուին, որովհետեւ տիւնամիտով գործ ածած են, Նոյն ձեւով պիտի վարուին և Մակեդոնիոյ Իրեք նահանգներուն մէջ:

— Զինովիւզ, Ռուսաց զեպանը Սուլթանէն կը պահանջէ որ Ռուսական Սեւ Մովեան նաւատորմի թոյլ տրուի Տարտանէլէն անցնիլ Մայրագոյն Արեւելք երթալու համար:

Սուլթանը կը հակառակի: — Պուլսոյ Ռուս գեպանատան եկեղեցիին մէջ ամբարջ Մարքոսովին համար հոգեհանգիստ կատարուեց է:

— Պուլէն կը հաղորդեն որ մակեդոնացի և էտիրէի նահանգի պուլկար գաղթականները մեծ խմբերով կը վերադառնան իրենց ծննդավայրերը:

ՌՈՒՍ—ՃՍՐՈՆԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

Նշանաւոր նկարիչ Վերէլլագիւնի «Բեթթորալովուսը» զրահաւորին հետ ընկղմուելը կը ճշտուի:

— Ամիրալ Սպիրալով Բեթթորալու գլխի մէջ մեծ համակրութեան առարկայ դարձած է. ամենքը անոր վրայ մեծ յոյս ունին. մէնէրալ Բարբոթիւն շնորհաւորական

և համակրանքով լի հեռագիր մը զրկած է. Սպիրալով պիտի ջանայ Վլաստիվոստքի և Բորթ-Արթուրի նաւարաժինները միացնել: Զարնացիները մեծ քանակութեամբ զօրք իջեցուցեր են ցամաք: Յամաքային մեծ ճակատամարտը կսկսուի մայիսին ըսկիպները:

— Զարնական ամբարջ Բօկօ, ի պատասխան Միքատոսի իրեն զրկած շնորհաւորական հեռագրին հեռագրում է որ մինչև Ռուսական արեւելիան ամբողջ նաւատորմից չը ջնջէ գոհ չը պիտի ըլլայ ու չը պիտի հանգստանայ:

— Զարնացիք իրենց նաւերուն վրայէն ծափահարութեամբ կը դիտեն եզեր Բեթթորալովուսքի խորտակումը: Բայց երբ թօզօ ամիրալ կիմանայ Մարքոսովի կորստեան լուրը, իսկոյն ընկած հերոսին համար պատու զօրահանգէս կընէ և կը հրամայէ ընդ որ նաւերէն թնթանութեան արձակել:

— Սնգլիական թերթ մը կը հաղորդէ որ ճարնական համալսարանի բոթիքներէն՝ սօքթ. ճէմօղէ նոր պայթուցիկ նիւթ մը գտեր է և ասով են պայթեցուցած Բեթթորալովուսքը:

— Բեթթորալովուսքի Պերլին կը հեռագրեն որ ծովին ալիքները Բորթ-Արթուրի փոխը նետեր են շատ մը դիակներ, ի թիւս որոց և Մարքոսովինը: Յարը լըստիւ հրամայած է մեծ քննութիւն մը կատարել «Բեթթորալովուսք» խորտակման առթիւ, որովհետեւ ճարնացիները չը պիտի կարենային սկաններ դնել, եթէ ռուսները լաւ հսկէին նաւահանգստին մուտքը:

ՅԻՍՆՍՍ

Հինգ սպաններ նշանակուած են Մակեդոնական ժամատարման երու պետ:

— Բարիզի թերթերու գրածին համաձայն, մինչև հիմայ Բարիզի մէջ ինպատու ռուս վիրաւորեալներու կէս միլիօն ֆրանկէն աւելի հաւաքուած է. հանգանակութիւնը դեռ կը շարունակուի:

ՄՐԱԶ ՍԱԷՏԻՆԵՆԻԷ

«Նատէժտա» հայ դերասանական խումբս այս գիշեր պիտի ներկայացնէ Տ. Վ. Պապանանի առաջնորդութեամբ:

1. Սերպիոյ Ալեքսանտր Թագաւորին և Թագուհոյն սպաննուելը և Բարոյալից թատերգ. 4 ալար:

Երգ և պարք Օրք. Ռէրէկայի և Օլիւայի կողմէ

3. Պարք ամբողջ խմբի կողմէ

4. Հովիւք և Հովուուհի Տրք: Պապանան, Յակոբեան և օր. Վեհանուշի կողմէ

Խիստ ծիծաղաշարժ զուելտ մը Վաղ գիշեր՝ «Լեւելի» ձի 20Ր 20Ր Ա.Ա.Ա.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՐԱՌԱՐԱՆ

ՊՈՒԼԿԱՐԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷ—ՏԱԿԵՐԷՆ կը բաղկանայ 592 երեսներէ, պարունակելով 30,000 բառեր և ոտեր: Ըն իր քույր մահուտ սպարդուրիւն Շիկո կուզի

Սկզբը, բազի յատկաբանէն, ունի քերականական կարեւոր գիտելիքներու և կանոններու ամփոփումը (40 երեսի չափ): Մէկ խօսքով բառարան մը որ իր պարունակութեամբ և իր չափաւոր գեղարվեստով յարմար օժանդակը կը հանդիսանայ պուլկարեան լեզուն ողջով փափաքող ամեն դասակարգի մարդոց, թէ ուսնողին, թէ վաճառականին և թէ պարզ արհեստաւորին:

ԳԻՆ 5 ՅԻՐԱՅ

Դիմել հեղինակին Ասասուր Մկրտիչեան Սօֆիա

ԿԱՐՏԻՈՐ ԱԶԴ

Ամէն կողմէ ընկերական բաղամթիւ շրջանակներէ մեզ անհատնում հասցէներ կը զրկուին, որ անոնց թերթ զրկենք: Մենք այստեղ ստիպուած ենք ըսել, որ «Ծարժում» չի հրատարակուիլ կուսակցական օժանդակութեամբ, այլ անոր հրատարակումը մենք ապահոված ենք մեր սեփական միջոցներով և ծանր զոհողութիւններ յանձն առնելով, ուստի ի վիճակի չենք ձրի թերթ ուղարկել:

Այս առթիւ ընդհանրապէս նորէն դիտել կուտանք թէ «Ծարժում» ի բաժանորդագրութիւնը կանխիկ է և իր հասցէին հետ բաժնեգիրն ալ չը զրկողներուն գիմուսները ի նկատի չեն առնուիլ:

Նոյնպէս մեզ կը զրկուին այս ու այն կողմէ ազգեր և յայտարարութիւններ առանց ստակի: Չեն ընդունուիլ ձրի կատարութիւք այդպիսի գիմուսներ:

Է. ԱՎԵՆԻՆԻ

«ԿՈՒԿԱՍԵԱՆ ՎԷՐԵՐ» Գին 3 ֆր. 20 օթ.

Գնելու համար գրիմել Վառնա Բար կէն Սիւնի ընթացարանին վարչութեան: Զանապարհածախը գնողին վրայ է: Դրամը կանխիկ վճարելի:

Ա. Զ. Դ.

Պոստը ինսպրեկցի 30-35 տարեկան, թիւաղէմ, միջնահասակ, սեռահեր, մանիֆաթու բաժի Միլիտան Թափ շանեան Պանթի ցոյցի ատեն Եգիպտոս մեկնելով, մինչև հիմայ իր վրայ և և լուր չէ անուած, ուստի իր վերայ տեղեկութիւն ունեցող ազգայիններէ կը խնդրուի. իմացնել ժամագործ Տիգրան Միլիտան, Տօպրիշ Պուլկարիալի հասցէին:

ՕՏԳՈՐՈՒՆԷՆ

Мурадъ-Ераносянъ Печатница «Враждность» Варна